



YERKIR

Union of NGO for Repatriation and Settlement
Union d'ONG pour le Rapatriement et la Réinsertion
Союз общественных организаций «Еркир» по репатриации и освоению
Հայրենադարձության եւ հիմնավորման կազմակերպությունների միություն

Մամլո հաղորդագրություն
07 հունիսի 2010թ.

Ֆրանսիայում գործող «Երկիր-Եվրոպա» կազմակերպությունը նամակ է հղել նախագահ Սարկոզիին Վրաստանի իշխանությունների կողմից ջավախքահայության իրավունքների ոտնահարման վերաբերյալ

2010թ. հունիսի 7-8-ին Վրաստանի նախագահ Սաակաշվիլիի Ֆրանսիա կատարվող պաշտոնական այցի կապակցությամբ Ֆրանսիայում գործող «Երկիր-Եվրոպա» կազմակերպությունը (www.yerkir.eu, կենտրոնակայանը՝ Լիոն) նամակ է հղել երկրի նախագահ Նիկոլա Սարկոզիին, որտեղ ներկայացրել է Վրաստանի կառավարության կողմից ջավախքահայության նկատմամբ իրականացվող խտրական քաղաքականության դրսևորումների փաստերը: Նամակում հատուկ անդրադարձ է արվել ջավախքահայության իրավունքների համար պայքարող ջավախքահայ գործիչ Վահագն Չախալյանի նկատմամբ վրացական իշխանությունների քաղաքական հաշվեանարդարի հանգամանքներին՝ աղաղակող օրինախախտումներով ուղեկցվող նրա դատավարությանը և շինծու մեղադրանքերով 10 տարվա ազատազրկման դատապարտմանը:

Նամակի ավարտին «Երկիր-Եվրոպա» կազմակերպությունը, նշելով, որ ֆրանսահայությունը գնալով էլ ավելի է մտահոգվում Վրաստանի հայության վիճակով, խնդրել է նախագահ Սարկոզիին միջնորդել իր վրացական պաշտոնակցի առջև՝ ջավախքահայության իրավունքների ոտնահարման քաղաքականությունը դադարեցնելու և Վահագն Չախալյանին անհապաղ ազատ արձակելու ուղղությամբ: